ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«___» _____2016թ. N_____

ք.Ստեփանակերտ

2016 ԹՎԱԿԱՆԻ ԲԵՐՔԻ ՏԱԿ ՑԱՆՎԱԾ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄԿՆԱՆՄԱՆ ԿՐԾՈՂՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԹՈՒՆԱՆՅՈՒԹԵՐՆ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼՂՀ շրջաններում աշնանացան մշակաբույսերի ցանքատարածքներում մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումներ կազմակերպելու նպատակով՝ հիմք ընդունելով ԼՂՀ շրջաններից ներկայացված հայտերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Մկնանման կրծողների դեմ պայքար իրականացնելու նպատակով «Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ պահեստում առկա 47.0 կգ ցինկի ֆոսֆիդից, 40.0 լ Իզոցինից և 2560.0 լ Բրոդիֆակումից համապատասխանաբար 47.0 կգ, 40 լ և 1330 լ բաշխել ըստ շրջանների նշված չափերով՝

Հ/հ	*Շրջանը*	*Ցինկի ֆոսֆիդ (կգ)*	*Իզոցին (լ)*	*Բրոդիֆակում(լ)*
1.	Ասկերանի շրջան	47.0		305.0
2.	Հադրութի շրջան			200.0
3.	Մարտակերտի շրջան		40.0	110.0
4.	Մարտունու շրջան			360.0
5.	Քաշաթաղի շրջան			355.0
Ընդամենը		*47.0*	*40.0*	*1330.0*

2.«Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ տնօրեն Վ. Խաչատրյանին՝

1) թունանյութերը բաց թողնել վերը նշված չափաքանակներով,
2) հսկողություն սահմանել իրականացվելիք պայքարի աշխատանքների նկատմամբ,
3) շրջաններից ընդունել հաշվետվություններ՝ կատարված աշխատանքների մասին:

3. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժնին՝ ապահովել սույն հրամանի դրույթների կատարումը:

Ա. ՄԽՈՅԱՆ